

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1897 թվականի
Պոլիարիոյ համար տարեկան 10 գրանի
» » վեցամսեայ 5 »
Արտասահմանի » տարեկան 12 »
» » վեցամսեայ 6 »
ԿԱՆՆԻՒՆ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ պրամ և շաշլի որկել հետեւեալ հասցեով
ԽՍԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԻՐԱԴՈՒՆԵՔ ԼՐԱԳՐՈՑ ՎԱՐՆԱ (ՊՈԼԿԱՐԻԱ)
Редакция на ВѢСТНИКЪ
„Ирaвункъ“
ВАРНА (България).

Rédaction du journal
„Iraouvunk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն որկուիր եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին անորո-
շովի կամ մասամբ:
Դասնունակ տղը 20 սանթիմ. երե-
սէն աւելի անգամներու համար 20 0/0
զեղչ կը լինի:

ԱԶԳ

Մեր Գահիրէի այն բաժանորդ-
ներէն որոնք ցարդ վճարած չեն
թերթին բաժնեգրին, կը խնդրենք
զայն ԱՆՅԱՊԱՂ. յանձնել Տ. Գա-
րեգին Պահլաւունի, կամ մանաւա-
րօթով զրկել զայն խմբագրու-
թեան:

Նոյն բանը կը խնդրենք Ռու-
մանիոյ բաժանորդներէն որոնք
թերթատարութեան կամ մեր քէօս-
թէնէն գործակալ Տ. Թէօֆիլ
Թէրզեանի միջոցաւ կրնան հաս-
ցընել մեզ բաժնեգրները:

Այս առթիւ պարտինք յիշեցը-
նել որոց որ անկ է թէ տարեւոր
շահին 11րդ. ամիսը վերջանալու
մօտ ըլլալով, այսուհետեւ ուր բաժ-
նեգրները մեզ հասցնելու դանդա-
ղի անհրաժեշտ չափն ու սահ-
մանը անցնել կը նշանակէ ի վնաս
խմբագրութեան մը որ ցարդակ
թերթ զրկելէ զատ յանցանք մը
գործած չէ:

ԵՐՈՊԱ ԵՒ ԹՈՒՐԻԱ

Կար երանելի ժամանակ մը ուր
սին յոյսերով կորօրուէինք եւրո-
պայի մարդասիրական և քրիստո-
նէական զգացումներու մասին, ու
ընդ լայն տեղ մը կը տրուէր քա-
ղաքական հաշիւներու մէջ: Հա-
յաստանի և Գոնաթաթանի աղէտ-
ները ջարդ ու փշուր ըրին այդ
յոյսերը: Այլ միայն ու միմիայն
եւրոպական տէրութեանց նիւթա-
կան շահերը պարտին ըլլալ ամէն
քաղաքական տեսութեանց ու խոր-
գաժութեանց հիմը:

Աշխարհ արարատ հասկցաւ ու
համոզուեցաւ որ Ռուսիա կուզէ,
այսինքն իր շահերուն նպաստա-
ւոր կը տեսնէ առ այժմ Արեւել-
քի մէջ քաղաքական արդի վիճա-
կը անփոփոխ պահել, հետեւաբար
չդպչել թուրքիոյ անկախութեան
և ամբողջութեան: Եւ Ռուսիա
կընէ ինչ որ կը մտադրէ Արեւել-
քի մէջ ասոր համալուրտ համար
պէտք չկայ գիմելու պատմական

հին փաստերու: Մեր նորագոյն
աղէտները անփոփոխ ապացոյցն
են ատոր: Ռուսիա չի համակրե-
ցաւ մեզ, դատապարտեց մեր
յեղափոխական շարժումները ու
այս բաւեց՝ մեզ կատարեալ ան-
յաջողութեան ու անասելի թշուա-
ռութեան մը մատնելու:

Ռուսիա չուզեց որ յաղթական
Թուրքիա շախմատուած Գոնաթա-
թանէ մաս մը հող կորզէ ու
Թուրքիա ստիպուեցաւ սահմանա-
զըլիւի աննշան փոփոխութեամբ
մը բաւակաւանալ: Ռուսիա և իր
հետ միւս տէրութիւնները կամ
ինչպէս կըսեն, եւրոպական ներ-
դաշնակութիւնը որոշեց կրեալի
տալ ինքնօրինութիւն, որուն դէմ
կը մաքառի բնականաբար Թուր-
քիա, սակայն ամէն նշաններ և
կարեւորագոյն ուսն և այլ թեր-
թերութիւններ կը ցուցնեն որ կը-
րէտական ինքնօրինութեան ծրա-
գիրը պիտի գործադրուի հակա-
ռակ Թուրքիոյ ընդդիմութեան
և զարձակութեան: Մարքիզ
Սալզպերի ըսաւ թէ եւրոպական
ներդաշնակութիւնը դանդաղ կը
գործէ, սակայն իր որոշումները
կը գործադրէ իր անդիմադրելի
հեղինակութեամբ: Եղբուկութիւն-
ները կը հաստատեն Ն. քրիստոնա-
կան վիճաբանութեան տառիքին
խորհրդականին այս խօսքը:

Աւստրիական զորքիոյ արտաքին
գործերու նախարար կոմս Կոլու-
խովսքիի վերջին ճառէն ալ կի-
մանանք որ բարենորոգումներու
խնդիրը յիտաձգուած է միայն
թուրք և յունական պատերազմին
պատճառով, բայց մէկ կողմ ձը-
գուած չէ:

Այսպէս՝ բանաւոր կերպիւ յու-
սալ որ կրէտական խնդրին լու-
ծումէն հոգը Պոլսոյ դեսպանները
ձեռք պիտի առնեն բարենորոգ-
ման խնդիրը որոց գործադրու-
թիւնը նոյնպէս որոշուած է եւ
բողական ներդաշնակութեան:
Որոշուած է, որովհետեւ Ռուսիա
կը փափագի որ Թուրքիոյ մէջ
բարենորոգման պէս բան մը տեղի
ունենայ. իր այս վստիքը կարե-
ւի է նկատել իր շատ բնական հե-
տեւանք իր դիտաւորութեան ան-

վթար պահելու օսմ. պետութեան
անկախութիւնն ու ամբողջութիւնը.
ասոնք շարունակ վտանգի կամ
երկրուն վիճակի մէջ պիտի գըտ-
նուին, քանի որ անփոփոխ շա-
րունակ են այն սոսկալի զեղծում-
ներ, կեանքի, պատուի և ինչքի
բունաբարութիւնները զոր օսմ. վարչու-
թիւնը կը գործէ իր քրիստոնեայ
և մինչեւ իսկ երբեմն իսլամ հպա-
տակներուն դէմ:

Սակայն ինչ բնութիւն և գոյն
կրնան ունենալ Թուրք պաշտօնե-
ութեան ձեռքով գործադրելի բա-
րենորոգումները: Այս մասին յու-
սախար ըլլալու վտանգին մէջ
չենք գոնէ մենք, հայերս, որ հիմ-
նովին սերտած ենք Թուրքն ու
Թուրքիան:

Մենք գիտենք որ ամենէն նը-
պաստաւոր պարագային մէջ բա-
րենորոգումները՝ ներսէն խարխուլ
և աղտոտութեամբ լեցուն չենք մը
վրայ քսուած ծեփին պիտի նը-
մանին, եւրոպական աչքեր խա-
բուլու կոչուած: Այս ալ սակայն
մեծ նշանակութիւն պիտի ունե-
նայ հայրիւս համար. այսչափ
ալ կարեւոր բարեփոխութիւն մը
պիտի ըլլայ, որ վերջ պիտի տայ
գոնէ կոտորածի և յայտնի ու հա-
մարձակ գործուած խոշոր հարս-
տահարութեանց. իսկ մուկի մէջ
աննշմարելի անկիւններու ու գե-
ղերու մէջ մասնակի փոքր հարս-
տահարութիւններ պիտի մնան ու
շարունակուին ցորչափ ապրի թըր-
քական վարչութիւնը:

Եւրոպա և մասնաւորապէս Ռու-
սիա գիտէ այս վերջինին ալ գոր-
ծին ճիշդ այսպիսի խաբուսիկ
բարեկարգութիւն մը կուգայ, որ
մէկ կողմէն Արեւելեան ինքիւրը
առժամապէս միւրի տակ ծածկե-
լու ծառայէ, և միւս կողմէն նոյն
խնդիրը վերաբանալու համար
պատրուակներ միշտ կարենայ ըն-
ձեռել Բէթերսպուրկեան դիւա-
նադիտութեան, երբ սա ժամը
հնչած նկատէ Թուրքիոյ մահա-
ցու հարուած մը իջեցնելու:

Զուսալի է ուրեմն մտիկ ա-
պագայի մը մէջ Թուրքիան տես-
նել օժտուած հարեւանցի բարե-
նորոգման մը արտաքին չգարովը:

ՄԵՐ ԶԱՆԱԿՆԵՐԸ

Ուրախաւթ երեւոյթ մըն է
որ վերջին ատեններս Պոլսկարիոյ
մէջ նախանձախնդրութիւն մը կը
նշմարուի կրթական գործը աւելի
ամուր կռուանի մը վրայ դնելու:

Եթէ այս նախանձախնդրու-
թիւնը տեսական ըլլայ, ինչպէս
կը սիրենք յուսալ, կամ լաւ եւս
հետզհետէ լայնայ, ընդարձակ-
ուի, անշուշտ ապագայի բեղմնա-
ւոր կեանք մը գուշակել կուտայ:
Հարկ է անգամ մըն ալ կրկնել
թէ հայութեան ինչ անդառնալի
կորուստ մը կը սպասէ եթէ իր
հասուն ուժերը, երիտասարդու-
թիւնը, միայն անձնական զբաղ-
մանց և հաճոյցը անձնատուր,
անտարբեր ակնարկ մը միայն ու-
նենայ գէպ ի մանկութիւն, գէպ
ապագան:

Մեր պապերը գերեզմանի սեմին
վրայէն թանկագին աւանդ մը թո-
ղած են մեզ, և այնպէս մտած են
ներս, յաւիտենական հանգիստ
քունը վայելելու:

Ազգութիւնն է այդ թանկագին
աւանդը:

Մեր ամենուս ճիտին պարտքն է
զայն անվթար պահել, ուրիշներու
փոխանցելու համար նոյն երկիւ-
ղածութեամբ: Պարտ է աղետա-
բեր ընդմիջման մը պատճառ չի
դառնալ, որպէս զի յաւերժանայ և
հասնի մինչեւ այն բաղձալի ժամը
ուր ամբողջ հայութիւնը պիտի
վերստին միանայ Մայր-Հայրենի-
քի գոգին մէջ, հինգ դարերու
ահուելի երազէ մը սթափածի
պէս:

Այդ նուիրական աւանդին ամեն
մէկ մասնիկը մէյմէկ հայ անհա-
տի վրայ կը ծանրանայ, և ով որ
այդ բեռին ծանրութիւնը քաղցր
չի գտներ, կը թերանայ անոր մա-
սին, անշուշտ յոռի կտակալատար
մը կը դառնայ, անպարկեշտ և
պարտապանց մը, նախնեացը սուրբ
ըղձանքին դէմ ըմբոստացող և հե-
տեւաբար դարբնու խորբրէն բխող
անէծքներու ենթակայ:

Մասնաւորելով խօսքերնիս Պոլս-
կարիոյ վրայ, խորհիմք որ, եթէ

ազգային կրթութիւնը փրկութեան միջոց չի նկատուիր ու չի փարինք անոր, մենք որ գէթ թուրքա-բնակ եղբարց պաշտպանութեան զէնքերն ալ չունինք մեր կողմ թիւը, հաւատքի տարբերութիւնը, ցեղային անհաշտ ատելութիւնը, ի՞նչ ուրիշ միջոց կունենանք մեր ազգային գոյութիւնը պահելու, ընդգէ՞մ տիրող տարրէն կու տրուելու անողորմ օրէնքին:

Ամէն հայ, ինչ դասակարգի ալ պատկանի, կատարելապէս համազ-ուած է այս ճշմարտութեան: Ինչ-չո՞ւ ուրեմն չի գիտնանք գործա-ծել այդ անվերապելի զէնքը, չոր նախախնամութիւնը դրած է մեր ձեռքերուն մէջ, ինչո՞ւ չի սիրենք զայն, իբր մեզ ամէնուս պատկա-նող մէկ հատիկ զաւակը, որուն վրայ կեդրոնացած են մեր համայն յոյսերը և հետեւաբար այնքան արժանի է վայելելու մեր ամենէն անձնուէր ջանքերը ու տքնութիւն-ները:

Ի՞նչ անհուն ասպարէզ Պուլկա-րիոյ հայուն, ազգային շահերու համեմատ զարգանալու հոս ուր թրքին տապալը բարեբախտաբար չի դար եռանդուն ուսուցչին թե-ւերը կտրելու, և լիառատ աղա-տութիւն կուտայ գործելու առանց բազմադիմի բարբարոսական կաշ-կանդութեան արգելաւանդ:

Եւ յետոյ, աչքի առջեւ ունե-

նայով նաեւ թուրքիոյ հայոց կրթական ասպարէզին վրայ կրած մեծ կորուստները, ատենը չէ՞ որ գէթ այս մերձաւոր կէտին վրայ գիտնանք փոխարինել հայութեան հասած այդ ֆիսաները:

Անշուշտ, ծնողական և ազգա-սիրական պարտքերն են ըմբռնող անձինքն են որ վերջապէս նկա-տելով բոլոր այս պարագաները, ստեղծեցին այդ ուրախառիթ ե-րեւոյթները զորս վերեւ յիշեցինք և որոնց մէկէ աւելի անգամ ար-ձագանգ դարձաւ իրաւունք այս սիւնակներուն մէջ:

Անշուշտ շատ ցաւալի պիտի ըլ-լայ եթէ փորձը ցոյց տայ թէ մեր ենթադրած բոլոր բարեքները ու-րիշ բան չեն եղած, եթէ ոչ չա-փազանց լաւատեսութիւն մը:

Եւ սակայն քստմնելի բան մը պիտի ըլլայ ամբողջ երկրի մը հայ տարրը աւելի երկար ժամա-նակ թմրած վիճակի մէջ երեւա-կայել:

Այսօր Պուլկարիոյ հայութիւնը բաւական կարեւոր տարր մըն է: Յառաջդիմելու համար ամէն առա-ւելութիւններ իր կողմն են. և ե-թէ նոյնիսկ մէկ քանին պակսին, իր բնածին ընդունակութիւնները կրնան հակադէմ զանոնք: Միեւ-նոյն խմբէն չէ՞ ան ալ ուսկից շինուած են այնչափ ուրիշ հոյա-կապ հայ դէմքեր. ինչո՞ւ ուրեմն

ինք ալ չի ջանայ փայլիլ, բարձ-րանալ և ինքզինքին օգտակար ըլլալով հանգեծ, իր ապրած միջավայրին մէջ հայութիւնը հաստատուն հիմերու վրայ դնել, և ազգին բեղուն ծորակներէն մէկը դարձնել զայն:

Այս ամէնքը իրականացնելու համար ազգային կրթութիւն մը տալն է ինքիբը:

Ի՞նչ է ազգային կրթութիւնը. Մարմնով և մտքով առողջ հայեր հասցնել:

Եղբայրական սուրբ համերաշ-խութեամբ միացած հայեր հաս-ցընել ամէնքն ալ նոյն ուղիղ զգա-ցումներով տոգորուած. եսակա-նութենէ, սեթեւեթէ, կեղծիքէ զերծ. իր ընտանիքին հետ՝ ազ-գին գերդաստանն ալ նոյն անհուն սիրով սիրող. որքան զգայուն՝ այնքան ալ քաջ և ճարպիկ, որ-քան բարի՝ այնքան հեռատես և թափանցող. չսրը լաւէն անջատե-լու ընդունակ. ցմահ անձնուէր. իր անձնական պատիւը ազգին պատուոյն հետ անբաժան նկատող: Եւ յետոյ, ազգային կրթութեան հական մասն է հաց ճարելը ու-սուցանել ամէնէն պարկեշտ մի-ջոցներով, դրամ դիզել հարստա-նալը, նա մանաւանդ այս ինչքը լաւագոյն եղանակով տրամադրել գիտնալը:

Բնագմթիւ հայաբնակ քաղաք-

ներ ունինք այսօր Պուլկարիոյ մէջ. ամէնքն ալ օժտուած իրենց գպրոցով ու եկեղեցիով, ճասնակ մը տարիներու մէջ ինչ փայլուն և կենդանի սերունդ կարելի է զտել անոնցմէ, եթէ ճարտար ձեռ-քեր, բարեացակամ սրտեր և մա-նաւանդ անվհատ հոգիներ զըտ-նուին ամէն կողմ: Բոլոր այդ բա-զաքները բոլորակ մը կազմած են որ սակայն կեդրոն մը չունի, ուսկից հրահանգուին, օրինակ առ-նեն, զէպ անոր ձգտին:

Այդ դիրքը այս պահուս անո-րոշ է և կը ծփայ. տեսնենք Պուլ-կարիոյ Պոլիսը կամ Տփղիսը դառ-նալու մեծ պատիւը ո՞ր քաղա-քին պիտի վիճակի: Ո՞ր քաղա-քին երիտասարդութիւնը աւելի կորով և ազգասիրութիւն պիտի ցուցնէ այս փառքին արժանանալու համար:

Եւ գուցէ կրթական շարժման մէջ նախաձեռնողութիւնը օր մը ծաւալի նաեւ Դանուբէն անդին, քիչ մը ցնցելու նաեւ այն տեղի-րու հայերը, ըլլայ Քարմէն Սիւ-վայի մայրաքաղաքը կամ Միւ-քովէ անդին, ուր տեղի թմրու-թիւնը սկսած է տակաւ առածի կարգ անցնիլ:

Գաւեր-Արշալիր

ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ԶՈՒՅՐ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՔՍՈՐԵԱՆԻ ՅԵՄԱՍԱԿԱՐԱՆԻՑ)

Թ.

— 1 —

Մի կիւրակէ այդպիսի արամազորու-թեամբ դուրս եկայ տունից եւ ուղեցի գնալ մի բարեկամիս մօտ. սակայն միաքան փոխեցի. ամենքից էլ կշտացել էի. աւելի թարմ, դեռ չը յագեցրած խօսակցի պէտք էի զգում:

Յանկարծ միաքան ընկաւ վարժուհի բարեկամուհիս, էլեւնան. վաղուց էր որ նրան չէի տեսել. թէեւ նա հաշ-տվել էր սոյն մտքի հետ, որ ես նրա խօսքով չէի դարձել թուրք խաղա-լուց:

Ես վճռեցի ոտքով գնալ նրանց գիւ-ղը եւ առանց ժամանակ կորցնելու ճամբա ընկայ: Գնում էի կամաց կա-մաց, չորս կողմս գիտելով, երբեմն ծխելով եւ մտածելով. ի հարկէ գըլ-խաւորապէս մտածում էի վերջին տա-րու վրա, որից յետոյ ես ազատ էի լինելու եւ վերադառնալու հայրենիք:

Յանկարծ ականջս ընկաւ արագա-վազ կառքի եւ կրգի ձայն. ետ նայեցի եւ տեսայ մի ծերունի գիւղացու: Նա ըստ ռուսական սովորութեան բարե-ւեց ինձ եւ ձիուն զսպելով գնացքը մեղմացրեց ու ասեց.

— Ինչո՞ւ էք ոտքով գնում, պարոն, եկէք միասին գնանք, իմ վասկան շատ լաւ ձի է, հաւատացնում եմ, Աստուած վկայ, երկուսիս էլ կը սանի:

Ես յայտնեցի իմ չնորհակալութիւնը

եւ քաղաքավար կերպով մերժեցի գիւ-ղացու առաջարկութիւնը:

— Ես առանց դրամի եմ ասում, չա-րունակեց գիւղացին:

— Խնդիրը դրամի մէջը չէ. պատաս-խանեցի ես. եղանակը լաւ է, զբօ-սանքի համար եմ ոտքով գնում:

— Հա, այդ պարոնական քմահա-ճոյք է. պարոնները միշտ տարօրինակ են լինում. բայց ո՞ր էք գնում:

— Յ... գիւղը:

— Օհ, ոտքով գնացողը համար բա-ւական հեռու է. դեռ մի ժամից աւել պէտք է գնաք. կը յոգնէք, եկէք, նաղ մի արէք, գնանք միասին:

Գիւղացին թէ բարի էր եւ թէ մի փոքր էլ գիտնի:

Ես կատարեցի Նիկիտ Իւանիչի խն-դիրը, այդպէս էր գիւղացու անունը եւ սեզաւորակցի կառքում:

Նա նախ պատմեց որ ինքը Նիկո-լայեան գիւղուր է. մասնակցել է շատ կոխներու. եղել է Կովկաս, Լե-հաստան, կուել է լեռնային երկրի գէմ, մասնակցել լեռնական ապստամբութիւ-նը խեղդելուն, ունի մի քանի նշան-ներ եւ շատ երկար ու բարակ բաներ, ամեն մի ծերունի գիւղացի յատուկ ո-գեւորութեամբ ու սնապարծութեամբ:

Իր գլխում ու սրտում կղած չեղածը գատարկելուց յետոյ, վերջապէս ուղ-ղակի ինձ գիմեց.

— Դուք թէեւ ռուսի նման էք խօ-սում մեր լեզուով, բայց թուի էք, զէմքով ռուսի չէք նմանում, ի՞նչ աղք էք:

— Հայ եմ, պատասխանեցի ես:

Հայ, դարմանալի բան, այստեղ ինչ էք չինում: Ինչ գործով էք պա-րապում:

— Աքորով եմ, եղաւ իմ պատաս-խանը:

— Քաղաքական էք, հա, այդ լաւ բան չէ. բայց ինչ արած, պատա-հում է:

«Ես գիւղերու թիւնից յետոյ հինգ տարի ժամաւարութիւն արի. Ծառ-քաղաքական քաղաքականներ եմ ու-ղեկցել մինչեւ Իրան քաղաքականը. եղել եմ եւ կանայք ու օրիորդ-ներ. մանաւանդ Ալեքսանդր երկրորդի սպանման միջոցին:

«Ոհ, որչափ երիտասարդ, սիրուն, բարի մարդիկ էին. Լարին սպանել էր մէկը, բայց քաղաքում պատժում էին հարիւրաւորներին. ես մեղքաւորում էի նրանց վրա, խղճում էի. ամեն կերպ աշխատում էի չը վշտացնել նրանց եւ խիստ չը վարվել հետեւը... մահա-ւանդ մէկ տասնութ տարեկան աղ-ջկայ շատ խղճացի. որչափ բարի եւ անվատ էր. բոլորովին չէր վհատ-վում. պատահածին ասում էր որ ցա-րերին պէտք է ոչնչացնել. վերջապէս ձանձրացայ... էլ չը կարողացայ ծա-ռայել. այնքան էլ յիմար չէի. զգացի որ շատերը զուր տեղն են ստանջվում:

«Մանաւանդ որ հասկացայ թէ նրանք բոլորը մեզ համար են աշխատում եւ մեզ համար չարչարվում: Դուք հայր ունէ՞ք, վերջացրեց Նիկիտը:

— Այո, պատասխանեցի ես:

— Էհ, լաւ ապրեցէք, վերջացրէք ձեր ժամանակամիջոցը. անշուշտ ձեր հայրը ծեր է. նա ձեզ ուսում է տուել, մեծացրել, որ իրան ծերութեան ժա-մանակ օգնէք. միջք է. հիմա աչքը ջուր կտրած անհամբեր ձեզ է սպա-սում:

Այդ միջոցին Յ. գիւղի եկեղեցին երեւաց:

Նիկիտը շարունակեց.

— Ահա եւ Յ... գիւղը. անշուշտ դուք այնտեղի վարժուների մօտ էք

գնում. ասում են որ շատ լաւ աղջի-կան են, բարի են, ձերանցից են. եւ ձեր նրանց մօտ գնալն էլ այդ հաստա-տում է. «ձկնորսը ձկնորսին հեռուից կը տեսնի» ասում է առածը: Չէ՞ որ ես հինգ տարի ժամաւար եմ եղել. այդ սուսակ բաներից մի քիչ հասկա-նում եմ:

Այդ խօսքերի վրա ես զէմքս խոժո-ռեցի. Նիկիտը այդ նկատեց եւ ասեց. — Ինչո՞ւ խոժոռվեցիք. հանգիստ ե-ղէք. ես շատախօս չեմ, թէեւ ձեզ հետ շատախօսութիւն արի. ես գիտեմ թէ ո՞ւմ հետ եմ խօսում. այս տեսակ բաներ ես գիւղացիների եւ ոչ տէր-տէրների հետ եմ խօսում. առաջին-ները շատ պարզամիտ են, երկրորդ-ները շատ վատ եւ խորամանկ. ես միայն մեր ծիսական դպրոցի վարժա-պետի հետ եմ խօսում. շատ լաւ երի-տասարդ է. մի օր էլ մեր գիւղը ե-կէք. ուղղակի իմ տունը. ես ձեզ կը ծանօթացնեմ նրա հետ. նա շատ լաւ գրքեր ունի. միշտ Մոսկվայից ու Պե-տերբուրգից է ստանում:

Ոտքը վերջացնելուց յետոյ ձիուն քաշեց եւ մի քանի վայրկեանից յե-տոյ կանգնեց եկեղեցու մօտ. ես կառ-քից թռայ, բարի ծերունու ձեռքը սեղմեցի. նա գլխարկը հանեց, ժըզ-տալով միաս բարով ասաց եւ ձիուն մտրակեց. կառքը թռաւ... մի քանի վայրկեանից ռուսական գիւղացու այդ եղակի տիպը անհրեւութեամբ իմ աչ-քից...

Ես բոլորովին նոր զգացմունքների ենթարկված քայլերս ուղեցի դէպի էլեւնանց տուն, որ եկեղեցուց բա-ւական մօտ էր...

ՎԱՐԴՕ

(Շարունակելի)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Տօպրիլ, 17 Նոյ.

Կաթոլիկոսական այցելու հոգևոր Գեր. Արսէն վարդ. վեհապետի Պուլկարիոյ հայաբնակ զանազան քաղաքներ այցելելէ ետք ամսոյս 10 ին տեղս հասաւ: Կիրակի օր հանդիսաւոր պատարագ մատուցանելով՝ կարգացուցեալ հայրապետական կոնգակը. յետոյ ժողովրդական կեանքի վրայ գեղեցիկ քարոզ մը խօսելով՝ հոգեհանգիստ կատարեց ընդհ. հայ նահատակելոց նուիրական յիշատակին:

Թաշիրէ օրը այցելեց վարժարանը. քննելով թաղական խորհրդոյ գործառնութիւնները՝ գովելի գտաւ զանոնք. միեւնոյն առանձն մասնանի ըրաւ կարգ մը բարեփոխումներ՝ որոց կիրառութեամբ զարկ մը տրուած պիտի ըլլայ ազգային և կրթական գործերու կանոնաւորութեանը:

Երկու խօսք ալ տեղւոյս գաղթականներու մասին:

Ինչպէս Պուլկարիոյ ուրիշ գաւառներ՝ նոյնպէս և Տօպրիլ ունեցած է իր գաղթականութեան բաժինը: Տեղւոյս գաղթականներուն թիւը 50 էն 60 ի կը հասնի այժմ. մէկ մասը ընտանիքի տէր. քիչ բացառութեամբ՝ գրեթէ ամէնքն ալ իրենց մասնաւոր զբաղումը ունին որով մնայուն հանգամանք մը ստացած են: Կերեւի թէ այս ձմեռ թշուառութիւնը հոս սրտաճմլիկ տեսարաններ չպիտի սլարզէ մեր առջեւ:

Հայ-երիտասարդութեան հրաւերով հինգշաբթի օր Գեր. Արսէն վարդ. վեհապետի պիտի խօսի լսարանական առաջին համախմբումին առթիւ:

ԴԱՐԲԻՆ



Շուշու, 15 Նոյ.

Գաղթականներու դեռ հազիւ առաջին խմբակները հոս հասած, ահա տեղացիներէ կազմուած աղքատախնամ մը կը պատրաստուի զանոնք քիչ շատ պատասպարելու, և այդ նպատակով կառավարութենէն վաւերացուած տետրակ մը ձեռքը հանգանակութեան կսկսի, ուսկից կը գոյանայ բաւական գումար մը՝ մեծագոյն մասամբ Պուլկարներէ ստորագրուած: Այդ գումարով է որ աղքատախնամը կը սկսի գործել: Հետզհետէ գաղթականներ կը հասնին, և սակայն փոխանակ աւելնալով՝ հետզհետէ եռանդը կը պակսի աղքատախնամին իսկ, և սակայն քանի մը գաղթականներ, ընկերութեան այս ընթացքէն յուսահատ՝ հետերին առնելով տեղացի եռանդուն հայ մը կը ձեռնարկեն նոր ընկերութեան մը կազմութեան: Գաղթականախնամ անուան ներքեւ: Նախկին աղքատախնամի

անդամներ իմանալով գաղթականներու այդ խմբակին մտադրութիւնը, զանազան միջոցներու կը դիմեն՝ մինչեւ իսկ սպառնալով զիրենք աքսորել տալ (կերելի թէ Պուլկարիոյ տեղացի հայերու միակ զէնքն է այդ սպառնալիքը): Սակայն բան մը օգուտ չընեն և Գաղթականախնամ ընկերութիւնը կը վաւերացուի կառավարութենէն: Ահա այդ միջոցին է որ նախկին ընկերութիւնը՝ բոլորեալով իր վարկին ստորնացումէն կառավարութեան մօտ, առանց հաշիւ ներկայացնելու, նորէն կը սկսի քիչ շատ գործել իցոյցս մարդկան: Ահա այդ բարեբաւտիկ վայրկեանէն ի վեր Շուշուի հայ գաղթականութիւնը օժտուած է երկու ընկերութիւններով՝ որոնք սակայն արգելք մը չեն ըլլալ որ դարձեալ գաղթական հայը չի մուրայ, չի մսի կամ անօթի, անտէր, գլուխը հանգչեցնելու տեղ մը իսկ չգտնելով ամէն օր չտառաւորի:

Բաւական ժամանակ այսպէս շարունակուելէ յետոյ, վերջերս նախկին աղքատախնամի անդամները յայտնի չէ ինչ շարժումիւ մղուած նախկին հանգանակութեան իրենց բով մնացած 194 ֆրանքի չափ գումար մը կուզեն գաղթականախնամի յանձնել, առանց սակայն իրենց տետրակները, հաշիւները հոն ներկայացնելու: Գաղթականախնամը կը մերժէ ընդունիլ. առաջինները՝ բարկացած՝ կորոշեն իրենք բաշխել 194 ֆրանքի հաց միայն, միանգամայն Գաղթականախնամի ներկայացնելով նպատակը ընդունողներու ցուցակ մը և յայտարարելով թէ, անոնց որոնց իրենք հաց պիտի տան՝ պէտք չէ որ գաղթականախնամի ու է նպատակ ընէ և ոչ իսկ դրամական:

Վերջապէս անհամաձայնութիւնը կատարեալ է, բան մը որ ուրիշ արդիւնք չունենար եթէ ոչ թըշուառութեան ծաւալումը այս ձեռք բան եղանակին մէջ. երանի թէ՛ մէկ կողմ նետելով ամէն սին վէճ՝ միանուազ անձնուիրութեամբ աշխատէին հէք գաղթականին դժբերակ կեանքը քիչ մը մեղմացնելու:

ՀՐԱՆՏ-ՎԱՀԷ

ԼՐԱՔԱՂ

Էջմիածնէն կը հաղորդեն թէ Գեր. Երեմիա Եպիսկոպոս Գալստեան վախճաններ է: Հանգուցեալը որ այժմ Ս. Հռիփսիմէի վանքը կը մնար, ստանձնած ըլլալով հոն վանահայրութեան պաշտօնը, կաթողիկոսական տեղապահի պաշտօնը վարած էր Մակար Կաթողիկոսի մահէն ետք մինչեւ խրիմեան Հայրիկի Էջմիածին երթալը: — Գահիրէի մէջ հայ գաղթականներու մասին հոգածութիւնը

կը շարունակուի: Շատ հեռաւոր երկիրներէ նպաստ կերթայ հոն. վերջերս 1755 զըշ. զրկուած է Աստորալիաէ և 1500 զըշ. վատի. հալֆաէ: Տեղւոյն գաղթականներու մասին եղած վերջնական կարգադրութիւնն է նոր գաղթական չընդունիլ եկեղեցիի շրջափակին մէջ, վասնզի Աղէքսանդրիէ կուգան շարունակ. ամէնէն աւելի անկարներուն և կարօտներուն շարունակել օրական նպաստի բաշխումը մինչեւ 1898 յունիսի ըսկիդը, ուսկից վերջ պիտի դադրի ամէն նպաստ: Որովհետեւ պատրաստ դրամ չկայ, ամսական նուիրատուութեան ձեւով հանգանակութեան մը ձեռնարկուած է քաղաքին կարող ազգայիններուն մէջ: Տիրաւոր փաշա 40 ոսկի ստորագրեր է:

— Բագուի մարդասիրական ընկերութեան խորհուրդը տեսնելով գաղթական հայերու կարօտ վիճակը, վերջնապէս որոշեց է բարուրել զայն: Բացուած աղքատանոցէն հեռացուցեր է կարօտ չեղողները, անոնց տեղ ճըշմարիտ չբաւորներ զնելով: Աշխատելու անկարողներուն ձրի ճաշ և հագուստ պիտի տրուի: Բագուի հայ տիկիներն ու օրիորդներն, ինչպէս անցեալ տարի, այժմ եւս նոյն եռանդով յանձն առած են աշխատիլ կարօտեալներու խնամածութեան: Իրենք հագուստներ կը ձեւեն ու կը կարեն անոնց համար. մօտէն կը հսկեն աղքատանոցին կերակուրներուն մաքրութեանը և կանոնաւոր բաշխումին վրայ: Սիրուն տեսարան երբ փափուկ և հարուստ օրիորդներ իրենց ձեռքով կերակուր կը հրամցունեն չքաւորներուն: Պատուանիշ մը Բագուի հայ գեղեցիկ սեւին այս վեհանքն ընթացքին:


— Ինչպէս ցոյց կուտան Պուլկարիոյ այլեւայլ քաղաքներէ զըշ. կուած թղթականութիւններ, գաղթականներու վիճակին մեղմացմանը համար յառաջիկայ ձմեռ, քիչ շատ նշանակելի եռանդ և գործունէութիւն ցոյց կը տրուին:

Սակայն, մինչ Եգիպտոսի, Բագուի, Թիֆլիսի և Պուլկարիոյ զանազան կողմերու հայեր փութկոտութիւն մը կ'արտայայտեն իրենց արեւակից դժբախտ եղբայրներու սնուցման ու պատասպարման միջոցները ժամ առաջ ձեռք առնելու մասին, վառնալի մէջ, ուր կրնայ ըսուիլ թէ ամէնէն աւելի խտացած կը ներկայանայ գաղթականութեան չքաւորութիւնը, ոչ ոք տեղէն չերեւար՝ գոնէ պղտիկ նախապատրաստութիւն մը տեսնելու համար: Նախկին յանձնաժողովը այլ եւս միմիայն Մանուրօսի վաւերացումով կ'զբաղի, տեղւոյս թաղական խորհուրդը լոկ թաղականութեան գործերով յափշտակուած է ու աչքին բան չերեւար, նոյնիսկ տիրող մեծ թշուա-

ռութիւնը՝ որուն կրնար բան մը ընել եթէ ուզէր. իսկ անդին աղքատախնամը կը քննայ խորքունով. այս մարմին գործադիր անդամները կերեւայ թէ կամք չունին շուտ ուշաբերելու. հրապարակային ազգարարութենէ ալ շուտ զգածուելու երեւոյթ չունին: Այս երկրորդ անգամն է որ կը յայտարարենք թէ իրենց բռնած ընթացքը բնաւ չի գնահատուիր, ու լաւագոյն կընեն ձգելով հեռանալով, որպէս զի ուրիշներ՝ աւելի բարեացակամ ու աւելի խղճահար՝ ժամ առաջ գան և գաղթականութեան վիճակին դարմանման միջոցները ձեռք առնեն:


Ուր է հաշիւ, հաշուեկշիռ:

ԹԱՍՀԻՀ



Կազէթամըզըն 72 նուսխէսին. տէ իւշիւնճի սահիֆէնին իշպուտէօրտիւնճի սիւթիւնընտա «Ապօնէլէրիմիլլէ Իքի սեօզ» սերլէվհալը պէնտին թասհիհինտէ մուհարրիւրի մախսուսըն պուլընմատըզը սէպէպլէ՝ պազը թաղրիրաթ վէ սէհվիյաթ վուզու պուլմուշ օլուպ պու սէհվիյաթըն էն պաշլընապը օլսն շու սաթըրը թասհիհ իտէլիմ, «ապօնէլէրտէն թէքմիլէն կազէթա պէտէլլէրի թահսիլ օլընտըգտա 100 տէ 80 իլէ անճագ մէսարիֆլէր զարանըն» եազըլմագ լազըմ Իքէն «100 տէ 10» եազըլմըշ ըտը:

ՐՈՒՍԻԱ ՀԱՎԱՏԻՍԱԹԸ



Թիֆլիս պէլէտիյէսի սըհհիյէ միւտիւրիյէթի թարաֆընտան էր. մէնի մուհաճիլլէրին իսնէ գօմօսիօնընա 260 բարչա էլպիսէ վէ 70 բարչա սայիր էշեա (ֆինճան, թաս, ֆէնէր վէ սայիրէ) եօլլանըլըշ օլուպ, պուլնարըն պիր գըսմը թիֆլիսաէ թանթիյեան նամ քիլիսէնին հավիսինտէ իւքեան իթմէքտէ օլան մուհաճիլլէրէ թէվլի օլընաճագ տըր:

— Րուսարը Էրմէնի միլլէթին է իմտատա տավէթ իթմէք մագ. սէտի իլէ բուսճա թապ ու նէշը օլընմըշ օլան «Вотская помощь» (եղբայրական օգնութիւն) նամ քիթապըն մուհարրիլլիկի թարաֆընտան «Րուս. վեդ.» կազէթայա վէրիլէն մայիւմաթա կէօրէ, մէքքիւր քիթապըն հասըլլութընտան 18000 ֆրանք Սթանպուլ Րուս էլիսինէ եօլլանըլմըշ վէ սէֆարէթհանէ մէքքիւր մէպլազը Էրմէնի միւհաճէնէ թէվլի օլընմագ իշիւն Պատրիարքա թէսլիմ իթմիշ տիր:

Րուսարըն միլլէթ տաշլարըմըզա շու եօլտա մուսվէնէթտէ պուլընմարընտան միթէշէքիլիլ, Րուս միլլէթինին աղամէթ ու շան ու շէօհրէթինէ գըյասէն՝ պու մուհվէնէթ «տէնիլտէն պիր պար-

տագ սու» միայնակ օլուպ, բէն-տիւնքին հէմքիւր օլան պիր խրաթիւյան միլլէթի սէֆալէթան զուրթաւմագ իշխն բէք կէճ գալ-տըլար իսէտէ, նիհայէթ շու սը-րա զըմըտամայա պաշլամըլ օլ-տըլարընտան, Շարգ խրաթի-յանլարըն համիսի օլան պու մու-ազլամ միլլէթին եազըն պիր ի-թիգալտա բէնտի մէսլէթինտէ իյֆաի վազիֆէ իտէճէկի մէլհուլ տըր:

Խմբագրութիւնս իր անկեղծ վշտակցութիւնը կը յայտնէ Մա-վիեան գերդաստանին՝ Տ. Մանուէլ Մալիեանի մահուան առթով, ո-րուն յուզարկաւորութեան հան-դէսը կատարուեցաւ երէկ մաս-նակցութեամբ ազգականներու և բարեկամներու խումըն բաղմու-թեան մը:

Կ Ի Ր Ի Տ

Բոմատան Տէյլի նիշուէ վերիւն պիր թէլէկրաֆա նազարէն, կի-րիտէ թալին օլընտագ վալինին ատանըն օրօնօմի ուսուլինտէ ի-տարէսին թէլքիլ վէ տէվաթի բէսմիյէլէրին թանդիմ իտէպիլ-մէսի իշխն լազըմ օլաճագ ազճէ-նին թէտարիքի պապընտա տիւ-վէի մուազլամանըն Սթանպուլ էլ-չիլէրի տէօթ միլիոն ֆրանգ էի-րիտ իշխն պիր իսթիգրալ իմ-զալամագ վէ մէզքիւր մէպլալը ատանըն կէօմրիւք հառըլթըն-տան էօտէմէք խուսուսընտա ետ-զընէն միւլէքքէրէյէ կիրիլէճէք-լէր իմիլ:

Ա Ւ Ս Տ Ր Ի Ա

Կէչէն հաֆթա Աւստրիանըն մէճիսի ումուսիստէ միւթէա-տիտ ֆըրգալար պէյնիտէ բէք չէտիտ գարըլըզլըլար զուհուր իթմիլ վէ մուրախալար պիրպի-րինին պաշընը սանտալիէլէրլէ սէլամամըլ օլտըլընը կաղէթա-լար վէ թէլէկրաֆալար պիլտիւրմիլ-լէր իտի:

Մէճիսի ումուսիստէ զուհուրա կէլէն պու գարըլըզլըլարըն սէմէ-րէսի օլարագ, էհալի տախի ա-յազլանուպ՝ 15-20 պին քիշի սօ-գազլարտա վէ բէսմի տայիւրէլէր էօնէրինտէ իճրաի նիւմայիշաթ իթմիլ օլտըլընտան, բէյսի վիւ-քէլա իսթիֆասընը վէրմէկէ մէճ-պուր օլմուշ տըր:

Վիէնէր Զայրընգ նամ բէսմի կաղէթա նոյեմ. 28 թարիխի իւլալէսը իլէ պիրտիւրմիլ տիր քի-իմրէրաթօր մէճիսի մէպուսանըն զայրը մուայէն պիր վազըթ ի-շխն թէլէսիւր օլընմաընը: Գօնթ Պատէնիէ էմը իթմիլ տիր:

Կաղէթաի մէզքիւրըն օլ կիւն:

տէ իքինճի պիր իւլալէսի տախի-րէյիսի վիւքէլանըն վէ մէճիսի մէպուսան բէյիսին իսթիֆա իթմիլ օլարգլարընը պիլտիւրմիլ տիր:

Մ Ի Ի Թ Ե Ն Ե Վ Վ Ի Ե

Սլմանիա մէճիսի մէպուսա-նըն քիւշաթը միւնասիպէթի իլէ-իմրէրաթօր վիլհէլմ իրաթընտիլ իթմիլ վէ տէվէթլէրին իթիֆա-զընտան պահս իտէրէք սուլհը ու-մուսինին ուզուէն միւտտէթ տէվամ իտէճէկիլէն իւմիտ կէօսթէրմիլ տիր:

Պուկար Ֆիւսը (նուախոււմ) ֆրանսըլ զապիթլէրին գօմանտաթ ալթընտա վարնայա կէլմէքտէ օ-լուպ, հազընէն պահրիյէ թալի-մինէ պաշլանըլաճագ տըր:

Եունան-Թիւրք միւսալէհէսի ահտնամէսինին օնպիրինճի մատ-տէսի էլան հալլ օլընամամըլ վէ մուրախալար պէյնիտէ մու-պայէնէթ տէվամ իթմէքտէ տիր: Եունան ճէրիտէլէրին զանընա կէօրէ, մէզքիւր մատտէնին հալլը իշխն տիւլէլի մուազլամանըն թէ-վասիլթինէ իզթիլա կէօրիւլէճէք տիր:

Սլմանիա էլիսի Մ. Մարշալ վէ ֆրանսըլ էլիսի Մ. Գամպոն ա-լաֆրանկա դեկտ. 10տա վէ Բու-սիա էլիսի Մ. Սինօվիէֆ տալի գեկտեմբեր 20տէ Սթանպուլա հէ-թիլէճէքլէր տիր:

Պունտան 50 կիւն մուգտտէմ վարնատան Սթանպուլա կիթմիլ օլան պաղը միլլէթաշլարըմըլ 48 կիւն պապը զապիթիյէ թէվզըֆ-հանէսինտէ հապս օլընտըգտան սօնրա, հիւրիւմէթ մարիֆէթի ի-լէ թէքրարվարօրա զօլըլըպ, վար-նայա եօլանըլմըլար տըր: Պուն-լարըն պէյնիտէ կէօրէ՝ Սթան-պուլ հապսհանէլէրինտէ բէք չօգ թիւրքլէր մահպուս պուլունըյօր-լար:

Թէհտիտմիլ մէքթուպար եազ-մըլ օլտըլարընտան տօլալը՝ կէ-չէն հաֆթա 9 էրմէնիլէրին մու-հաքքէմէսի ճիւնայէթ մահքէմէսի հուզուրընտա պազըլըպ, մէրգու-մանտան պէշի էպէտի զալէպէնտ ճէզաւընա մահքիւմ իտիլմիլ, վէ տիկէր տէօթ մազնուլարըն պէ-րաթընա գարար վէրիլմիլ իքէն, պապը զապիթիյէ պու պէրտաթ իթմիլ օլան 4 քիշի տախի մահ-քիւլէրլէ պու կիւնէ զատար մահպուսհանէտէ թուլթմազտա տըր: Պապը զապիթիյէնին պու մուամէլէսի Թիւրքիանըն ատա-լէթինէ պիր նուսուէն ատա օլը-նապիլիլ:

ԱՐՆԱՎՈՒՏԼԸԳՏԱԸՍԵԱՆ

Պուկարտան Բօլիթիլ գամու-թօնտէնցին ալտըլը մալիւմաթա կէօրէ, Արնավուտար Ճապիւ-լէր վէ Ճապիւ, իքէք վէ Բրի-զէրնթ գազալարընը թուլթմուշ-լար: Թիւրք ապքէրլէրի աաըլարըն իւզէրինէ հիւճիւմ իթմէյէ ճէսու-րէթ իտէմէյուպ, եհնի իմտատ եէթիլմէսինէ պէլէմէքտէ իմիլ-լէր:

Պու տաըլարըն բէյիսի պուլը-նան Բիգա պէլին գօմանտաթ թահլթընտա 12000 սիւսըլը Ար-նավուտ պուլընմազտա տըր:

Եօգարը-Արնավուտըլ Սերպիա-յա հէմհուտուտ պուլընտըլընտան Պէլկրատտա օլ թարաֆլարըն հա-լի բէք թէհլիլէլի կէօրիւլէյօր:

Պապը Ալի օլ թարաֆա էսա-քիւր վէ պիր գօմիսիոնը մախսուս եօլլամըլ օլտըլընը եազըլաթ-աաըլարըն սէրկէրտէսի Բիգա պէ-լին Սթանպուլա տալէթ օլընմաթ իշխն գօմիսիոնը մէզքիւրէ էմը օլընմըլ տըր:

Պապը Ալի էհալինին զիհնին թէսքին իթմէք իշխն Արնավու-լըլըն ըսեանը պատտըրըմըլ վէ իրէքտէ տալիլ պէրքէմուլ օլտը-ղընը իլան իտէյօր, բէսմի թիւրք հաֆտիսաթընա կէօրէ, Բիգա պէյ տէրտէսթ օլընմըլ վէ ախի-րէն եօլլանըլան ապքէրլէր կէրի չալըլըմըլ ըմըլ:

Ա. Գ. Ք. Ա. Տ. Ա. Խ. Ն. Ա. Մ.

Արտատախնամ ընկերութեան գործ. Ժողովը վերջին Ժամուն մէզ լրաժ է օգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներու հաշուե-կշիւը, ինպէս նաեւ պատասխան մը իրաւունքի մէջ սոյն ընկերու-թեան ընթացքի մասին գտուած յօդուածին: Այս երկու գրու-թիւններ առաջիկայ թիւով պիտի հրատարակուին:

ԶԱՒԻՐԻ ԲԻՍՅԱՍԸ

Վառնա 22 Նոյեմբեր
Պոռտալ
Վալօն, լիպրա 47-53, հէքթօլ. 8.80-9.50 ֆրանք
Արապա, լիպրա 47-55 հէքթօլ. 8-10.80 ֆրանք
Արքա
Լիպրա 38-41, հէքթօլ. 3.80-4.20 ֆրանք
Ֆաստաշեա
100 օգգոսը 19-24 ֆրանք՝ մալա կէօրէ
Մըսըր
Գուրու, լիպրա 57-58, ֆր. 5.60-6 Եւր, լիպրա 53-54 ֆր. 5-5.20
Նարօլէն 20, 60 ֆո. հիսապը իլէ կիւնտէ 8-10 վալօն վէ 40-50 տրոպա պուլտայ, 5-6 արապա արբու, 7-8 արապա ֆաստաշեա վէ 15-20 տրապա մըսըր կէ-մէքտէ տիր:

Ա. Մ. ՄԷԼԻՔՕՑ ՊԻՐԱՏԻՐԼԵՐ

ՏԻՒԻՇ ՄԱՔԻՆԱԼԱՐ

Տէքօրիտի վառնա

Եհնի սիստէմ տիքիլ մաքիւնա-լարը «Լսնտոն Մէլիքօֆ» մարգա-սընտա, թէքմիլ Պուլկարիտա պուլունան մաքիւնալարտան տահա էյի օլուպ, էհալիյէ գօլալըլը իշին պէտէլի ճէսթէ ճէսթէ ալ պէ ալ էօտէնիլէպիլիլ. պէշ սէնէ իշին կարանցիա, Եազընտա Տօպրիճտէ, Սիլիստրէտէ, Բրօվալտա, Պալ-չըգտա, Շուվալտա տէրօլար ալը-լաճագ:

Վառնատա ալըլմըլ օլն պու մաղապա՝ Զար Պօրիս սօգաղընտա, Ն. 800:

ԱՂԶԻՍՆՅ ԿՐԹԱՐԱՆ

Նորահաստա Աղլիանց Կրթա-րանին մէջ յառաջիկայ Դեկտեմ-բեր 1ին Զեազիտուքեան ճիւղը փորձ և հմուտ ուսուցչուհի մը պիտի սկսի դասախօսել: Այն Տիկինները և Օրիորդները որոնք կը փափաքին միայն այս ճիւղին հետեւիլ՝ կրնան ներկայ գտնուիլ նոյն դասին համար որոշուած Ժա-մուն մէջ:

Տեղեկութեանց համար դիմել առ Տնօրէնուհին

Արմաւենի Սահակեան
Դ. Թաղ 5 թիւ
Զինուորական փուռին դէմը
Վառնա

ՆՈՐ ՔՆՍԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

Կ Ա Մ

ՀԱՒԱՔԱԾՈՑ

Հին եւ նոր Ազգ. երգերու
Սոյն երգարանը որ հրատարակ-չին կողմանէ Մ. Խաչիկեանի յանձնուած՝ մինչև ցարդ կը վաճա-ռուէր ի վառնա Արեւիկեան Տպա-րան, յետ այսօրիկ հրատարակչին կարգադրութեամբ կը վաճառուի ի Ռուսնուք, գրափաճառ Տիար Գառնիկ Տէօքմէճեանի քով: Փա-փաքողք միւսնոյն կանոնաւորու-թիւնները պիտի վալիլէն դիմելով սոյն վերջին հասցէին:

Տ Պ Ա Ր Ա Ն

ԿՐԹԱՌԱՆԻ ԼՐԱԶՈՅ

Լրագրիս վերջին երեսի սիւ-նակներուն մէջ օտար լեզուներով ալ ազգեր Պը ղետեղուին: Ա-ռանձին կը տպագրուին գրքեր, տետրակներ ու կը պատրաստուին հայերէն, պուլկարերէն, ֆրան-սերէն եւ յունարէն լեզուներով ընկալազրիւր, հասցէներ, հար-սանեաց եւ ալ հրաւիրազրիւր, այցեքարտ եւ այլն:

ԳԼԵՐ ԶՍՓԱԻՈՐ

Փափագողք պարտին դիմել խմ-բագրութեան հասցէին: